



**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ՈՐՈՇՈՒՄ**

15 մարտի 2019 թ.

N 168-Ա

ք. Ստեփանակերտ

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՆՈՒԹՅԱՆ
ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ԱՆՁՆԱԳՐԵՐԻ ԿԱԶՄՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ
2019 ԹՎԱԿԱՆԻ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով Արցախի Հանրապետության կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 28-ի N 1135-Ն որոշման 15-րդ կետի 1-ին ենթակետը և ղեկավարվելով Արցախի Հանրապետության Նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 25-ի ՆՀ-108-Ն հրամանագրով սահմանված կարգի 6-րդ և 92-րդ կետերով՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **որոշում է**.


Հաստատել Արցախի Հանրապետության բնության հուշարձանների անձնագրերի կազմման միջոցառումների 2019 թվականի ծրագիրը՝ համաձայն հավելվածի:



ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ

[Handwritten signature]

Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ



Ծ Ր Ա Գ Ի Ր

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՆՈՒԹՅԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ
ԱՆՁՆԱԳՐԵՐԻ ԿԱԶՄՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ**

I. ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳԻՐ

Բնության հուշարձանների պահպանությունը կարևոր բնապահպանական, սոցիալ-տնտեսական և ռեկրեացիոն հիմնախնդիր է, որի լուծման համար անհրաժեշտ է իրականացնել տարածքների հստակեցման, չափազրման, սահմանների ճշգրտման և անձնագրավորման միջոցառումներ:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 30-ի «Բնության հուշարձանների ցանկը հաստատելու մասին» N 1053-Ն որոշմամբ հաստատված բնության հուշարձանների ցանկում (այսուհետ՝ ցանկ) ներառված 88 բնության հուշարձաններից կազմվել և հաստատվել է տասնչորս բնության հուշարձանների անձնագրեր:

Ցանկում ընդգրկված բնության հուշարձանները լիարժեք չեն ներկայացնում Արցախի Հանրապետության տարածքում առկա կենդանի և անկենդան բնության համալիրների և առանձին օբյեկտների հարուստ բազմազանությունը: Ցանկում առկա են նաև անանուն աշխարհագրական օբյեկտներ, որոնց անվանակոչելու համար անհրաժեշտ է ճշգրտել մի շարք աշխարհագրական օբյեկտների անվանումները և տեղադիրքերը:

Արցախի Հանրապետության բնության հուշարձանների անձնագրերի կազմման միջոցառումների 2019 թվականի ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) շրջանակներում նախատեսվում է իրականացնել ցանկի համալրման և/կամ փոփոխման համար նախատեսված թվով տասը հուշարձանների հետազոտություններ:

Ցանկում ընդգրկված բնության հուշարձանների ընդհանուր քանակից ծրագրով նախատեսվում է նաև դաշտային հետազոտությունների իրականացմամբ կազմել տասնչորս բնության հուշարձանների անձնագրեր, որոնց անվանումները ներառված են ստորև ներկայացված աղյուսակում.

Հ/Հ	Անվանումը	Տեղադիրքը
1	«Մեծ Նան» քարանձավ-աղբյուր	Ասկերանի շրջան, Խնապատ գյուղից մոտ 2-2.5կմ հարավ-արևմուտք
2	«Ալ լճեր» հրաբուխ	Քաշաթաղի շրջան, Հակ գյուղից 22կմ հյուսիս-արևմուտք
3	«Իշխանասար» հրաբուխ (Կարադաղ լեռ)	Քաշաթաղի շրջան, Հակ գյուղից 15կմ արևմուտք
4	«Քառման» հրաբուխ (Քարմանքեթալե լեռ)	Քաշաթաղի շրջան, Հակ գյուղից 25կմ հյուսիս-արևմուտք
5	«Գանձակի» ջրվեժ	Մարտակերտի շրջան, Վանք գյուղի մոտ
6	«Ծապին ծոր» ջրվեժ	Մարտակերտի շրջան, Առաջածոր գյուղի մոտ, 20-25 մ բարձրությամբ
7	«Ծալք» լիճ	Շահումյանի շրջան, «Ջերմաջուր» նախկին առողջարանից 13կմ հարավ-արևմուտք
8	«Դուբխուլի» հանքային աղբյուր	Շահումյանի շրջան, Թուփխուն գետի միջին հոսանքում, Ձուար գյուղից 6 կմ հարավ, Թուփխուն գետի ձախ հովտայանքում
9	«Կոմկեռ» ջրվեժ	Շահումյանի շրջան, Դադիվանքի և Աբ. Աստվածածին վանքի միջև, Տրտու գետի ձախ գաղիթալի լանջին
10	«Շրլան» հանքային աղբյուր	Շուշիի շրջան, Շուշան գյուղի մոտ
11	«Պեխի» աղբյուր, (Եսայի աղբյուր)	Շուշիի շրջան, Շուշի քաղաքից 3 կմ հարավ արևմուտք
12	«Թաղարնի» (Ձելվկա) ձառ	Հաղրոթի շրջանի Տումի գյուղի «Կարմիր հաչ» կոչվող տեղամասում, տրամագիծը՝ 60սմ, բարձրությունը՝ 27մ, տարիքը՝ 600 տարի
13	«Դիզակ» բնապատմական տարածք (Տողածոր)	Հաղրոթի շրջան, Տումի գյուղից մոտ 4-5 կմ հարավ-արևմուտք
14	«Պատարայի գետահովիտ» (Կուսանաց բնապատմական տարածք)	Ասկերանի շրջան, Պատարա գյուղից 7կմ հարավ-արևմուտք

II. ԾՐԱԳՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ծրագրի իրականացման նպատակն է՝ Արցախի Հանրապետության բնության կենդանի և անկենդան հուշարձանների հարուստ բազմազանության պահպանությունն ու կայուն օգտագործման ապահովումը՝ ցանկի համալրման և/կամ փոփոխման ու բնության հուշարձանների զբաղեցրած հողատարածքների, դրանց պահպանման գոտիների չափազանցում և հողատարածքների սահմանազատման միջոցով:

Ծրագրի խնդիրներն են.

1) Արցախի Հանրապետության բնության հուշարձանների անխաթար վիճակի պահպանության նախադրյալների ապահովումը.

2) բնության հուշարձանների հողամասերի սահմանազատումը:

III. ԾՐԱԳՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

Ծրագրի շրջանակներում նախատեսվող միջոցառումներն են.

1) ցանկի փոփոխման և համալրման նպատակով բնության հուշարձանների վերաբերյալ հավելյալ նյութերի հավաքագրումը, ուսումնասիրումը և տիպաբանական նախնական դասակարգումը.

2) բնության հուշարձանների զույգագրման, անձնագրավորման և թվայնացված քարտեզների պատրաստման նպատակով դաշտային հետազոտությունները.

3) բնության հուշարձանների տարածքների չափագրումը և սահմանների նկարագրումը.

4) բնության հուշարձանների պահպանման գոտիների սահմանումը.

5) բնության հուշարձանների անձնագրերի մշակումը կամ լրամշակումը.

6) բնության հուշարձանների և դրանց պահպանման գոտու սահմանները պատկերող քարտեզ-հատակագծերի պատրաստումը.

7) բնության հուշարձանների պահպանման գոտիների տակ ընկած հողամասերի սեփականության սուբյեկտների ճշտումը և այդ հողամասերի օգտագործման սահմանափակումների սահմանումը.

8) բնության հուշարձանների երկրատեղեկատվական բազայի ստեղծումը:

IV. ԱՎՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

Ծրագրի իրականացման արդյունքում.

1) կստեղծվի բնության հուշարձանների համալրված ամբողջական ցանկը.

2) կսահմանվեն բնության հուշարձանների չափերը, սահմանների և պահպանման գոտու նկարագրերը, կպատրաստվեն քարտեզ-հատակագծերը.

3) կստեղծվի բնության հուշարձանների երկրատեղեկատվական բազան.

4) կմշակվեն բնության հուշարձանների անձնագրերը՝ «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի պահանջներին համապատասխան.

5) կանվանակոչվեն անանուն աշխարհագրական օբյեկտները և կճշգրտվեն դրանց տեղադիրքերը:

Ընդհանուր առմամբ ծրագրի իրականացումը հնարավորություն կտա ճշգրտել և համալրել ցանկը՝ հնարավորինս ամբողջական պատկեր ստեղծելով Արցախի Հանրապետության տարածքում բնության կենդանի և անկենդան հուշարձանների հարուստ բազմազանության տեղադիրքերի, չափերի և դրանցում առկա բնության քաղաղորհների վերաբերյալ, ինչը մեծ հնարավորություն կստեղծի բնապահպանական և բնօգտագործման խնդիրների լուծման զուգորդմամբ էկոտուրիզմի զարգացման համար:

Բնության հուշարձանների անձնագրերով սահմանված ռեժիմներով կապահովվեն դեգրադացված էկոհամակարգերի բնականոն վերականգնումը և

սոց վտանգված կենդանի և անկենդան բաղադրիչների պահպանումը, ինչպես
սակ կստեղծվեն նախադրյալներ բնության հուշարձանների արդյունավետ
կառավարման համար:

**Վ. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ**

Ծրագրի իրականացման համար «Արցախի Հանրապետության 2019 թվականի
պետական բյուջեի մասին» Արցախի Հանրապետության օրենքի N 1 հավելվածի 05
բաժնի 6 խմբի 1 դասի «05. ԱՀ բնության հուշարձանների անձնագրերի կազմման
միջոցառումների ծրագիր» ծրագրով նախատեսվել է 3 764 800 (երեք միլիոն յոթ
հարյուր վաթսունչորս հազար ութ հարյուր) ՀՀ դրամ:

ԱՐՑԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ՊԵՏ-ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ



Ա. ԱԶԱՐՅԱՆ